



Սիփան Շիրազ

Պատմություն ապագայի մասին

Իմ արժանապատվությունը թույլ չէր տալիս, որ այդքան կոլոտ-կարճահասակ լինեմ, և դրա համար ես մեկ մեկ արտասվում էի: Դրա համար երկինքը այնքան բարձր էր, այնքա՛ն, այնքա՛ն բարձր էր, չե՛ք պատկերացնում: Եվ երբեք իմ ապրած ունայն ու դատարկ տարիների ընթացքում չկարողացա իմ գլուխը կպցնել երկնքին, կամ երկինքը իջեցնել, որ գլխիս կպչեր, որ գլուխս երկինք դառնար, թեկուզ մի քիչ մեղավոր, մի քիչ սուգ, մի քիչ կապույտ, մի քիչ առա՛վոտն իր ծոցում պահած, մի քիչ գիշեր պահած իր ծոցում, մի քիչ խավար ու լույս, մի քիչ ծնունդ և մահ, մի քիչ հարություն և մահ, մի քիչ լռություն և աղաղակ իր մեջ պահած այդ երկինքը դառնար իմ գլուխը, կամ իմ գլուխը դառնար երկինք: Ահա՛ քեզ ցանկություն:

Ա՛հ քեզ երանություն: Ուրեմն մի գլուխը քի՞չ է քեզ, կամ մի երկինքը քի՞չ է աշխարհի համար. -Այս աշխարհը մե՛րն է: Եվ ես ասում եմ.- Թող ձեզ լինի և՛ իմ գլուխը, և՛ այս երկինքը, ու թող ինձ մնա մի

կտոր ամպիկ, որը որ ես գիտեմ ավելի մա-
քուր է, քան այն գլուխը, որ ես կրում էի ու-
սերիս, և այն երկինքը, որ դուք մինչ ի մահ
փառաբանում եք: